

**Եթերի սպասարկման մենեջերի պաշտոնական պարտականությունները
Ընդհանուր դրույթներ՝**

Եթերի սպասարկման մենեջերը հանդիսանում է ուսուցման բաժնի աշխատակից:

Մենեջերի նշանակումը և աշխատանքից ազատումը կատարվում է կազմակերպության տնօրենի հրամանով:

Մենեջերի ֆունկցիոնալ պարտականությունները՝

- Համակարգել եթերում հաղորդավարների աշխատանքը,
- Վերահսկել խաղերի ընթացքը սահմանված կանոնների շրջանակում՝ առանց խախոռումների,
- Հետևել հաղորդավարների պարտականությունների կատարմանը,
- Կազմել հաշվետվություններ հերթափոխի վերաբերյալ,
- Ուղղել հաղորդավարների սխալները,
- Անհրաժեշտության դեպքում ուղարկել հաղորդավարներին վերապատրաստման,
- Ժամանակին տեղեկացնել ուսուցման բաժնի դեկավարին հաղորդավարների սխալների վերաբերյալ,
- Հաղորդակցվել այլ բաժինների հետ՝ ըստ անհրաժեշտության:

Մենեջերի իրավունքները՝

- Ծանոթանալ կազմակերպության դեկավարության որոշումներին, որոնք առնչվում են իր գործունեությանը, ստանալ տեղեկություններ և փաստաթղթեր բոլոր հրամանների, կարգադրությունների, նորմատիվ ակտերի վերաբերյալ, որոնք վերաբերում են իր աշխատանքին,
- Մաստաբային ստորաբաժանումներից պահանջել տեղեկություններ և փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են իր աշխատանքին պարտականությունների իրականացման համար,
- Առաջարկություններ ներկայացնել բաժնի աշխատանքի բարեկավման և աշխատանքի օպտիմալացման վերաբերյալ,
- Բարձրացնել որակավորումը տարբեր ուսուցման ձևերով,
- Առաջարկել խնդիրների և սխալների լուծման եղանակներ իր լիազորությունների շրջանակում,

- Կազմակերպության այլ բաժինների աշխատակիցների հետ հաղորդակցվել ընթացիկ աշխատանքային խնդիրների վերաբերյալ,
 - Առողջության կամ կյանքի սպառնալիքի դեպքում հրաժարվել կատարել իր պարտականությունները և լրել աշխատավայրն առ ժամանակ:

ՄԵՆԵՉԵՐԻ պատասխանատվությունը ներառում է, բայց չի
սահմանափակվում հետևյալով՝

- Սույն պատունի նկարագրությամբ նախառեսված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կամ դրանց կատարումից խուսափելու համար՝ Հայաստանի Հանրապետության գործող աշխատանքային օրենսդրությամբ սահմանված սահմաններում:
 - Գործառուին կամ աշխատողներին նյուրական վնաս պատճառելու համար՝ Հայաստանի Հանրապետության գործող աշխատանքային և բաղաբացիական օրենսդրությամբ սահմանված սահմաններում:
 - Եթենց գործունեությունը իրականացնելիս կատարված հանցագործությունների համար՝ Հայաստանի Հանրապետության գործող վարչական, բրեական և բաղաբացիական օրենսդրությամբ սահմանված սահմաններում:
 - Պատունեական լիազորությունները չարառահելու համար:
 - Ներքին աշխատանքային կանոնակարգի, աշխատանքի և հանգստի գրաֆիկների, կարգապահության, ինչպես նաև անվտանգության չափանիշների համակարգված խախտման դեպքում:
 - Կորպորատիվ հաղորդակցության և գործարար էքիպայի կանոնների կողման խախտման դեպքում:
 - Գաղտնի տեղեկատվության, առևտրային գաղտնիքների բացահայտման համար:

«Սեղանի թեմիսի ազգային պրոֆեսիոնալ սպորտային լիգա» ՍՊԸ տնօրեն՝